# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2001թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին

2001թ. ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող 21 ընթացիկ գիտահետազոտական թեմաների գծով կատարած աշխատանքները, որոնք մշտապես գտնվել են ինստիտուտի տնօրինության և գիտխորհրդի ուշադրության կենտրոնում: Դրանք են՝

1. Հին Հայաստանի պետականության պատմություն (ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Կրկյաշարյան)
2. Հայոց պետականությունը և Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետությունը վաղ միջնադարում (ղեկավար՝ պ. գ. դ.,պրոֆ. Է. Դանիելյան)
3. Հայաստանը միջին դարերում (ղեկավար՝ ակադեմիկոս Հ. Բարթիկյան)
4. Արցախը և հայ-ռուսական հարաբերությունները (ղեկավար՝ ակադեմիկոս Վ. Բարխուդարյան)
5. Հայ պարբերական մամուլի պատմություն (ղեկ.՝ պ. գ. դ.,պրոֆ. Ա. Խառատյան)
6. Հայկական հարցը և Ռուսաստանը XIX դ. վերջին և XX դ. սկզբին (ղեկ.՝ պ. գ. դ., պրոֆ. Ս. Ստեփանյան)
7. Հայ ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին (ղեկ.՝ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ա. Համբարյան)
8. Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին (ղեկ.՝ պ. գ. թ. Ա. Մելքոնյան)
9. Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն 19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ (ղեկ.՝ պ. գ. թ. Դ. Մուրադյան)
10. Հայ գաղթավայրերի պատմություն (ղեկ.՝ ակադեմիկոս Վ. Միքայելյան)
11. Կիլիկիահայության պատմության հիմնահարցեր (XV-XX դդ) (ղեկ.՝ պ. գ. թ. Ռ. Գասպարյան)
12. Հայաստանի առաջին Հանրապետության պատմություն (ներքին քաղաքականություն) (ղեկ.՝ ակադեմիկոս Հ. Ավետիսյան)
13. Խորհրդային Հայաստանի պատմության հիմնահարցեր (ղեկ.՝ պ. գ. դ., պրոֆ. Վ. Ղազախեցյան)
14. Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին (ղեկ.՝ պ. գ. դ. Կ. Հարությունյան)
15. Արևելքի երկրների հայ համայնքների պատմություն (1915-1995թթ.) (ղեկ.՝ պ. գ. դ. Ջ. Ղասաբյան)
16. Համասփյուռքյան կազմակերպություններ (ղեկ.՝ բ. գ. դ. Կ. Դալլաքյան)
17. Հայաստանի երրորդ հանրապետությունը 10 տարում (1991-2000թթ.) (ղեկ.՝ պ. գ. դ.,պրոֆ. Գ. Գեղամյան)
18. Հայաստանը 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին թեմայի պատմագրությունը (ղեկ.՝ ակադեմիկոս Հ. Սիմոնյան)
19. Հայաստանի վերամիավորման և հայկական պետության վերստեղծման հարցը և Մեծ տերությունների քաղաքականությունը (19-րդ դ. վերջին քառորդ- 1918թ.), (ղեկ.՝ ակադեմիկոս Գ. Գալոյան)
20. Հայաստանի ցենզուրայի պատմություն (ղեկ.՝ Գ. Մարտիրոսյան)

«Հին Հայաստանի պետականության պատմության» (ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդ. Ս.Մ.Կրկյաշարյան) թեմայի շրջանակներում հրատարակության է պատրաստվել Ս.Մ.Կրկյաշարյանի «Հին Հայաստանի պետական կառուցվածքը» աշխատությունը, որտեղ առաջին անգամ ամբողջականորեն տրված է մ.թ.ա. VI դարից մինչև մ.թ. V դարն ընկած ժամանակաշրջանի Հայաստանի պետական հաստատությունների կազմավորման ու հետագա զարգացման պատմությունը: Հրատարակվել են Ս.Մ.Կրկյաշարյանի՝ հունարենից

հայերեն թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Քսենոփոնի «Սոկրատյան երկեր» և Պլուտարքոսի «Կենսագրություններ» աշխատությունները: Վերջինս պարունակում է արժեքավոր տեղեկություններ հայ ժողովրդի հին շրջանի պատմության և մշակույթի վերաբերյալ:

«Հայ պարբերական մամուլի պատմություն» (ղեկ.՝ պ.գ.դ. Ա.Ա.Խառատյան) թեմայի ուսումնասիրության շրջանակներում հրատարակության է պատրաստվել «Հայ պարբերական մամուլի պատմության» 2-րդ հատորը (1900-1920 թթ.)», որտեղ առաջին անգամ ընդհանրացված ձևով ներկայացվել են XX դարի սկզբի հայ մամուլի գրեթե բոլոր ուղղությունները:

«Հայ քաղաքական կուսակցությունների պատմություն (XIX դ. վերջ – XX դ. սկիզբ)» (ղեկ.՝ պ.գ.թ. Դ.Ա. Մուրադյան) թեմայի շրջանակներում հրատարակության է պատրաստվել «Հայ քաղաքական կուսակցությունների պատմությունը կազմավորումից մինչև 1914 թ.» ժողովածուն, որտեղ նորահայտ արխիվային վավերագրերի, ժամանակի պարբերական մամուլի հրապարակումների, պատմագիտական գրականության հարուստ հիմքի վրա նորովի լուսաբանվել և ներկայացվել է նշված թեման:

«Ջավախք. պատմաժողովրդական ուսումնասիրություն» (ղեկ.՝ պ.գ.թ. Ա.Ա.Մելքոնյան) թեմայի շրջանակներում քննության են առնվել Ջավախքի ժողովրդագրության հիմնահարցերը ինչպես արևմտահայերի 1830 թ. գաղթի նախօրյակի, այնպես էլ դրանից հետո ընկած ժամանակահատվածի համար:

«Հայկական հարց ցեղասպանությունը և տերությունները» (ղեկ.՝ պ.գ.դ. Ս.Ս.Ստեփանյան) թեմայի գծով աշխատանքներ են կատարվել, ակտիվորեն: ներկայիս հայ-թուրքական միջպետական և գիտական հարաբերությունների մշակվող հայեցակարգի ճշգրտման ուղղությամբ, ինչն ունի խիստ հրատապ նշանակություն:

«Հայաստանի առաջին Հանրապետության պատմության» թեմայի (ղեկ.՝ ակադ. Հ.Ա.Ավետիսյան) թեմայի շրջանակներում հրատարակության է պատրաստվել Հ.Ա.Ավետիսյանի «Հայերը Բաքվի պաշտպանությունում» աշխատությունը, որտեղ նոր արխիվային փաստաթղթերի հիման վրա ցույց է տրվում դեպի Բաքու թուրքական արշավանքի դեմ հայկական զորամասերի կազմակերպումը և վերջիններիս մարտական գործողությունները: Հրատարակության է պատրաստվել Գ.Գ.Մախմուրյանի «Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ» աշխատությունը:

«Խորհրդային Հայաստանի պատմության հիմնահարցեր» (ղեկ.՝ պ.գ.դ. Վ.Ն.Ղազախեցյան) թեմայի շրջանակներում հրատարակվել են Վ.Ն.Ղազախեցյանի «Գ.Նժդեհը Զանգեզուրում (1920 թ. վերջ – 1921 թ.)» և Ա.Ս.Վիրաբյանի «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը 1945-1957 թթ.» ուշագրավ մենագրությունները, որոնցում նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա առաջին անգամ լուսաբանվում և ներկայացվում են հայ պատմագիտության համար մեծ նշանակություն ունեցող զգալի թվով հիմնահարցեր:

«Հայ ժողովրդի մասնակցությունը 2-րդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին» (ղեկ.՝ պ.գ.դ. Կ.Հարությունյան) թեմայի շրջանակներում հրատարակվել են Կ.Հարությունյանի «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945)», «Գ.Ա.Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)», «Հայ ժողովրդի ավանդը Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակում(1941-1945)» (Հ.Մանուկյանի համահեղինակությամբ) և «Участие сотрудников НАН РА в Великой отечественной воине )1941-1945)» (Մ.Գ.Սահակյանի համահեղինակությամբ) մենագրությունները, որոնցում ներկայացվում է հայ ժողովրդի ավանդը և մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին, վեր են հանվել նոր փաստեր, ճշտվել՝ հայ հերոսների և գեներալների թվաքանակը:

Ինստիտուտի մասնագետների հեղինակությամբ հրատարակվել «Պատմություն. Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում» հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների համար,(«Նորագույն պատմություն» 8-րդ դասարանի համար) և «Հայրենիք և Ծառայություն» (բանակի սպայակազմի համար) դասագրքերը:

Ինստիտուտը սեփական ուժերով պատրաստել և հրատարակել է «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուի 2-րդ համարը:Աշխատանքներ

են կատարվել նաև «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական 4-հատորյակի պատրաստման ուղղությամբ:

Ինստիտուտի գիտաշխատողների կողմից 2001թ. հրատարակված աշխատությունները.

1. Կրկյաշարյան Ս.Մ., Պլուտարքոս,«Կենսագրություններ» (թարգմանություն հին հունարենից, առաջաբան և ծանոթագրություններ),Երևան, «Սարգիս Խաչենց»:
2. Կրկյաշարյան Ս.Մ., Քսենոփոն, «Սոկրատյան երկեր», (թարգմանություն հին հունարենից, առաջաբան և ծանոթագրություններ), Երևան, «Սարգիս Խաչենց»:
4. Арутюнян К.А.,Саакян М.Г., Участие сотрудников НАН РА в Великой Отечественной войне(1941-1945),Ереван, ,,Гитутюн,, НАН РА.
5. Հարությունյան Կ.Ա.,Մանուկյան Հ.Հ., Հայ ժողովրդի ավանդը Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակում (1941-1945),Երևան,«Զանգակ-97»:
6. Հայոց պատմության հարցեր (Գիտական հոդվածների ժողովածու՝ 2),ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»:
7. Հարությունյան Կ.Ա., Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945),Երևան, «Հրազդան»:
8. Հարությունյան Կ.Ա., Գ.Ա.Հարությունյանի գործունեությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին(1941-1945), Երևան,ՀՀ ԳԱԱ «Գիտություն»:
9. Վիրաբյան Ա.Ս., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով. հասարակական-քաղաքական կյանքը 1945-1957թթ.,Երևան,ՀՀ ԳԱԱ «Գիտություն»:
10. Ղազախեցյան Վ.Ն., Գ.Նժդեհը Զանգեզուրում (1920թ.վերջ-1921թ.), Երևան, «Զանգակ-97»:
11. Բարխուդարյան Վ.Բ. և հեղինակային կոլեկտիվ, Պատմություն. Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում, դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Երևան, «Զանգակ-97»:
12. Գեղամյան Գ.Մ., Հովհաննիսյան Ն.Հ., Նորագույն պատմություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան, «Զանգակ-97»:
13. Ազատյան Հ.Գ., «Բախտորոշ պայմանագրեր» (ուսումնական ձեռնարկ), Երևան, «Զանգակ-97»:
14. Մանուկյան Հ., Հայաստանը Հայրենական պատերազմի տարիներին:
15. Համբարձումյան Ռ., Վարք Նժդեհի, Երևան,«Զանգակ-97»:
16. «Գարեգին Նժդեհ-115», գիտաժողովների նյութեր, Երևան,ՀՀ ԳԱԱ «Գիտություն»:
17. «Պատմագիտական հետազոտություններ», գիտական հոդվածների ժողովածու, Վանաձոր, «Վանատուր»:

ՊԻ անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումները

| N | Միջոցառումները | Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները | Մասնակիցների թիվը | |
|---|---|---|---|---|
| | | | ընդամենը | այդ թվում արտ. երկրներից |
| 1 | Գիտաժողով, նվիրված Հայոց ցեղասպանության 86-րդ տարելիցին | ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ, 23.04.2001թ. Պատմության, Արևելագիտության, Հայոց ցեղասպանության ինստիտուտներ | 100 | - |
| 2 | Գիտխորհրդի ընդլայնված նիստ, նվիրված ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ա.Ս.Համբարյանի 75-ամյակին | Պատմության ինստիտուտ 8.06.2001թ. | 65 | - |
| 3 | Գիտաժողով, նվիրված Առաքելոց վանքի հերոսամարտի 100-ամյակին | ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ, 23.11.2001թ. Պատմ.ինստիտուտ, «Զորավար Անդրանիկ» միություն | 75 | 3 |
| 4 | Գիտաժողով, նվիրված Ալեքսանդր Մյասնիկյանի 115-ամյակին | ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ Պատմության ինստիտուտ, 14.12.2001թ. | 100 | - |

ՊԻ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ-անդամ երկրներ, կատարած գործուղումները

| Երկիրը | Գործուղված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|
| | Գիտաժողովներին մասնակցելու համար | Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար | Բանակցությունների և կոնսուլտացիաների համար |
| 3 | 4 | 5 | 6 |
| Ֆրանսիա | - | 1 | - |
| ԱՄՆ | 2 | - | 1 |
| Սիրիա | 1 | 1 | - |
| Թուրքիա | - | - | 1 |
| Անգլիա | - | - | 1 |
| Ռուսաստան | 3 | - | 1 |
| Ուկրաինա | 1 | - | - |
| Վրաստան | - | - | 1 |
| Ղազախստան | - | - | 1 |

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ՊԻ-ում

| Երկիրը | Ընդունված գիտնականների թվաքանակը | | |
|---|---|---|---|
| | գիտաժողովներին մասնակցելու համար | Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար | Բանակցությունների և կոնսուլտացիաների համար |
| 3 | 4 | 5 | 6 |
| Ռուսաստան | - | 1 | 1 |
| ԱՄՆ | - | 2 | - |
| Ֆրանսիա | - | 1 | - |
| Իտալիա | - | 1 | - |
| Արգենտինա | - | - | 1 |
| Հունգարիա | - | - | 1 |

ՊԻ գիտաշխատողների 2001թ. հրապարակումների ընդհանուր քանակը

| Մենագրություն, ժողովածու և այլն | | Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն | | Հոդվածներ, զեկուցումների թեզիսներ և այլն | |
|---|---|---|---|---|---|
| Հանր. | Արտասահմ. | Հանր. | Արտաս. | Հանր. | Արտաս. |
| 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 13 | 1 | 3 | - | 87 | 9 |

Ասպիրանտների թվաքանակը

| Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1. 01. 2002թ. | | Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք) | |
|---|---|---|---|
| ա)կ | ա)չկ | ա)կ | ա)չկ |
| 2 | 3 | 4 | 5 |
| 2 | 7)4 | - | 4(1) |

ՊԻ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

| Աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք) | Գիտական աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք) | ԳԱԱ ակադեմիկոսներ (այդ թվում կանայք) | Գիտության դոկտորներ (այդ թվում կանայք) | Գիտության թեկնած. (այդ թվում կանայք) |
|---|---|---|---|---|
| 128(50) | 101(28) | 8(-) | 34(2) | 49(16) |

Մասնագիտացված գիտական խորհուրդների աշխատանքները

| Մասնագիտությունը | Պաշտպանությանությունների թիվը | | | |
|---|---|---|---|---|
| | Ինստիտուտի աշխատակիցների կողմից | | Ինստիտուտից դուրս հայցողների կողմից | |
| | դոկտ. | թեկնած. | դոկտ. | թեկնած. |
| Հայոց պատմություն և պատմագրություն | 1 | 4 | 2 | 7 |

Պատմության ինստիտուտի տնօրեն,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ